

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսեյ Բ-ը իր 24 փետրվար 1994 թվակիր նամակով դիմել էր Նորին Սուրբ Օծություն Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Վազգեն Ա-ին և Ադրբեջանի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-Իսլամ Ալլահշուքյուր Փաշա-Զադեին՝ խնդրելով Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման համար դիմել հակամարտող կողմերին՝ կոչ անելով անհապաղ դադարեցնելու արյունահեղությունը:

Ստորև ներկայացնում ենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի պատասխան նամակը Ալեքսեյ Բ Պատրիարքին և դիմումնագրերը՝ ուղղյալ Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության նախագահներին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարներին: